

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

Р. Г. ХАЧАТРЯН. *Русская историческая мысль и Армения (XVII—начало XIX вв.)*. Изд-во АН АрмССР, Ереван, 1987. 362 с.

Գրախոսվող աշխատությունը նվիրված է միմյանց հետ փոխադարձաբար կապված երկու հարցերի՝ ռուսական պատմագիտությունը Հայաստանի, ռուս-հայկական հարաբերությունների մասին և ռուսական պատմագիտական, հասարակական մտքի դերը երկու ժողովուրդների մերձեցման գործում: Հեղինակն իրեն զբաղեցնող հարցերը լուսարանելու նպատակով անդրադառնում է ռուսական տարեգրություններին և ապա ազնվականական և մինչև անցյալ դարի առաջին քառորդի բուրժուական պատմագրությունը:

Ռ. Խաչատրյանը ուսումնասիրել է 34 հատորից բաղկացած ռուսական տարեգրությունների շիակատար ժողովածուն (ՍՊԲ, 1846, Մոսկվա, 1978), պատմաբաններ Ա. Լիզլովի, Ա. Մանկիևի, Ֆ. Պրոկոպովիչի, Վ. Տատիշչևի, Մ. Շչերբատովի, Գ. Միլլերի, Ի. Բուտինի, Ն. Կարամզինի, Մ. Զուկովի, Ինչպես նաև Մ. Լոմոնոսովի, Ն. Նովիկովի, Ա. Ռադիշչևի և ուրիշների աշխատությունները: Նա իրավամբ էական նշանակություն է տվել XV—XVIII դդ. ռուս հասարակական գործիչների և ճանապարհորդների (Յա. Լիզլով, Ֆ. Լոմոնով, Վ. Գագարա, Ա. Սուխանով և ուրիշներ) գործերին, որտեղ կան Հայաստանի մասին ուշադրության արժանի նյութեր: Նրա տեսադաշտից չի վրիպել XVIII դարի ռուսական պարբերական մամուլը, հատկապես պատմագիտական բնույթ ունեցող (Ն. Նովիկով «Вѣднѣ», Ֆ. Տոմասկի «Россійскій магазин», Ն. Կարամզին «Московский журнал», «Вестник Европы») պարբերականները: Ուսումնասիրել է իրեն հետաքրքրող ժամանակաշրջանի մասին եղած ռուսական և հայկական գրականությունը, այդ թվում Վ. Բարտոլդի, Բ. Տուրանի, Բ. Գրեկովի, Մ. Տիխոմիրովի, Դ. Լիխաչովի աշխատությունները:

Տարեգրությունները տեղեկություններ են պահպանել այն մասին, որ Կիևյան Ռուսիայի ձևավորման ու զարգացման շրջանում հայերը տնտեսական ու մշակութային կապերի մեջ էին նրա հետ և անգամ իրենց համայնքն էին ստեղծել Կիևում: Մի փոքր ավելի ուշ նրանք հաս-

տատվում են Մոսկվայում, Նիժնի Նովգորոդում, Աստրախանում: Ռուս տարեգիրը նշում է, որ 1390 թ. Մոսկվայի հրդեհը սկսվում է «Հայ Արա-համի տնից»: Կազանի տարեգիրը, երբ խոսում է Իվան Ահմդի կողմից 1552 թ. Կազանը զրավելու և ապա Մոսկվա վերադառնալու մասին, նրան հանդիսավոր դիմավորողների թվում հիշատակում է նաև հայ վաճառականներին: XV—XVI դդ., ըստ տարեգրությունների, հայերն արդեն առևտրով էին զբաղվում Ռուսաստանի շատ վայրերում: Տարեգրությունները տեղեկություններ են հաղորդում նաև ուրիշ՝ հատկապես արևելյան երկրներում ապրող հայերի մասին:

Աշխատության հեղինակը չի անտեսում տարեգրությունների ժամանակաշրջանի ռուսական զուտ եկեղեցական աղբյուրները, ուր նյութեր են պահպանվել ռուսական ուղղափառ և հայ լուսավորչական եկեղեցիների հարաբերությունների մասին: Դրանցում խոսվում է հայերի կողմից քրիստոնեություն ընդունելու, 451 թ. քաղկեդոնական ժողովի մասին, որ քննադատվեց միաբնակությունը և ապա այն մասին, որ հայ եկեղեցին 554 թ. Դվինի ժողովում մերժեց քաղկեդոնական ժողովի վճիռը: Հռոմեական եկեղեցուց անջատվելը, բացի զուտ դավանաբանական վիճերից, Ռ. Խաչատրյանը իրավացիորեն դիտում է որպես բյուզանդական ագրեսիային հակադրվելու դիրքորոշում:

Մենագրության մեջ փաստական նյութով ցույց է տրվում, թե ինչպես XVIII դարի ռուսական պատմագրությունը որոշակի ժառանգություն է ստանում տարեգրական ժամանակաշրջանի պատմական մտքից: Ազնվական պատմագրության ներկայացուցիչներ Վ. Տատիշչև, Մ. Շչերբատով, Ն. Կարամզինը և ուրիշներ այդ ասպարեզում կարևոր դեր կատարեցին: Նրանք ռուսական տարեգրություններից և դրական հուշարձաններից ռուս-հայկական հարաբերություններին վերաբերող մեծ քանակությամբ նյութեր գրեցին շրջանառության մեջ: Ուշադրություն դարձրեցին Ռուսաստանի հայկական գաղութների պատմության հարցերի վրա, որպես

ֆերկու ժողովուրդների փոխհարաբերությունների կարևոր օղակի:

Ռուս ազնվականական պատմագրության ներկայացուցիչների աշխատությունները համեմատելով վաճառականական, բուրժուական պատմագիտական մտքի հետազոտողներ Մ. Ջուլկովի, Ի. Գուլիկովի, Պ. Ռիշկովի և այլոց աշխատությունների հետ՝ հեղինակը նշում է դրանց գաղափարական և թևատիկ ուղղվածության տարբերությունը: Վերջիններիս զրադեցնում են նոր շրջանի ուսու-հայական հարաբերությունները, հատկապես պետության ժամանակաշրջանը: Նրանց մոտ տարբերություն է նկատվում նաև սկզբնաղբյուրների օգտագործման հարցում: Նրանք, ի հակադրություն ազնվականական պատմագրության ներկայացուցիչների, շրջանստության մեջ են մտցնում գլխավորապես նոր շրջանի արխիվային նյութերը: Դրանց աշխատությունները հնարավորություն են տալիս լավ ընկալելու հայ վաճառականական, բուրժուականացող խավերի դերը հայերի ուսական կողմնորոշման գործում:

Ռուս պատմաբանների ու հասարակագետների երկերում պահպանված վկայությունները մանրախույզ քննարկելուց հետո հեղինակը բնութագրում, ընդհանրացնում է այդ ամենը: Նա ցույց է տալիս, որ ուս ազնվականական և բուրժուական պատմաբանների աշխատություններում բացահայտվում է այն իրողությունը, որ հայ ազատագրական շարժման հարցում Ռուսաստանի հովանավորող քաղաքականությունը եղել է հայ-ուսական հարաբերությունների հիմնական և բնորոշ գործը: Հովանավորական այդ քաղաքականությունը բխում էր, անշուշտ, Ռուսաստանի արտաքին քաղաքականության շահերից, որը լիովին համընկնում էր Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական ձգտումներին:

Դրվատելի է այն, որ Ռ. Խաչատրյանը ամենեին տուրք չի տվել ազնվականական, բուրժուական պատմագրությանը, ընդհակառակը, ցույց է տվել նրանց դասակարգային սահմանափակությունը, քննադատել ուսական միապետության քաղաքականությունը մեծարելու նրանց ձգտումները: Դրա հետ մեկտեղ նա շեշտում է պատմական այն իրողությունը, որ ազնվականական և բուրժուական պատմագրությունը, քանի որ պաշտպանում էր ուսական պետության արտաքին քաղաքականությունը, բնականաբար, կանգնած էր հայ ժողովրդի ազատագրական շարժման ուսական կողմնորոշման, թուրք-պարսկական տիրապետությունից ազատագրվելու նրա պայքարը պաշտպանելու դիրքերում:

Գրքում իրավացիորեն XVIII դարը դիտվում է որպես ուս-հայական հարաբերությունների ազդագրման մի շրջան, որը սկսվեց հենց դարի

արշալույսին 1701 թ. Իսրայել Օրու Ռուսաստան գալով և հայ ժողովրդի ազատագրության հարցը հզորացող հյուսիսային հարեանի հետ կապելով: Նոր թափ ստացած այդ հարաբերությունների դրսևորում էր հանդիսանում նաև ուսահայ գաղութների երևան գալը: XVIII դարում հիմնվում են Հարավային Ռուսաստանի, Հյուսիսային Կովկասի (Նոր Նախիջևան, Ղզլար, Մոզդուկ) և Պետերբուրգի գաղութները, աշխուժանում են նախկինում առաջացած (Մոսկվա, Աստրախան) հայական համայնքները: Պետրոս I-ի և Եկատերինա II-ի հրամանագրերի և տրված առանձնաշնորհումների հետևանքով էր, որ կազմավորվեցին ու աճեցին այդ գաղութները: Ռուսական կայսրները հետամտ էին բնակեցնելու և տնտեսապես յուրացնելու հարավային երկրամասը: 1770—1780-ական թթ. (հատկապես 1783 թ. Գեորգիևսկի դաշնագրից հետո) ուս-հայական հարաբերությունները առավել աշխուժացան: Հրապարակեցին Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու և նրա հովանավորությամբ հայկական պետականությունը վերականգնելու ծրագրերը:

Գրքի հեղինակը միանգամայն ձեռն է վարվում, երբ XVIII դարի հայ-ուսական հարաբերությունները և Հայաստանի ազատագրման խնդիրը դիտում է Արևելքում, մասնավորապես Անդրկովկասում Ռուսաստանի վարած ընդհանուր քաղաքականության հետնախորքի վրա: Ընդգրկում այդ մոտեցման շնորհիվ լայն տեղ է տրվում նաև ուս-վրացական հարաբերություններին: Նման մոտեցումը լիովին արդարացի է, քանի որ Անդրկովկասի ժողովուրդների առանձնապես վրաց և հայ ժողովուրդների ազատագրական ձգտումները նույն հունով էին ընթանում և բնականաբար այդ ասպարեզում նրանք մեծապես համագործակցում էին:

Քննարկվող աշխատության երկրորդ հիմնական հարցադրումը ուսական պատմական գրականության դերի վերահանումն է ուս-հայական մերձեցման ասպարեզում: Ռուսական պետությունը, ինչպես նշվեց, տնտեսական ու քաղաքական իր շահագրգռություններից ելնելով, հովանավորող քաղաքականություն էր տանում Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ: Պետության քաղաքականությունը պաշտպանող պատմագրություն էլ դրական վերաբերմունք է դրսևորել այդ ժողովուրդների ազատագրական պայքարի ու ուսական կողմնորոշման հանդեպ: Այդ հանդամանքը էական նշանակություն է ունեցել ուս և հայ ժողովուրդների փոխհարաբերությունների ու մերձեցման գործում: Գրքում կոնկրետ փաստերի միջոցով բացահայտվում է երկու ժողովուրդների փոխհամեմատի ու մերձեցման հարցում պատմական գրականության նշանակությունը: Այս-

պես, օրինակ, իր ժամանակին Ռուսաստանում լայն ճանաչում ունեւր Ա. Լիզլովի «Սկյութական պատմությունը», որի էջերից հեղինակը կոչ էր անում աշակցել հայ ժողովրդին՝ թոթափելու թուրքական լուծը: Դա չէր կարող հետք չթողնել ռուս հասարակության տրամադրության վրա: Անտարակույս, ընթերցողների շրջանում հետաքրքրություն էր արթնացնում Վ. Տատիշչևի ուշագրի վերաբերմունքը հայոց լեզվի ու հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ, Մ. Շչեբրատովի կողմից հայերին ռուսական արևելյան առևտրում մեծ դեր վերագրելը և այլն:

Ռուս-հայկական կապերի մասին տարեգրությունից Ն. Կարամզինի վերջրած «Հյատակություններ», Մ. Խորենացու «Պատմություն» նյութերը շրջանառության մեջ մտցնելը, հայերի մասին եղած վկայությունների զետեղումը իր հրատարակած պարբերականներում, հարկավ ռուս հասարակության լայն խավերին ծանոթացնում էին հայոց պատմությանը, ռուս-հայկական հարաբերություններին: Դա կարևոր նշանակություն էր ձեռք բերում պատմական հենց այդ փուլում՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու նախօրյակին: Համանման դեր էին կատարում նաև Մ. Չուլկովի, Ի. Գուլիկովի և մյուսների աշխատությունները: Վերջինս Պետրոս I-ի մասին ծանրակշիռ աշխատության մեջ ցույց էր տալիս, թե ռուսական կայսրը իր արևելյան քաղաքականության մեջ որքան կարևորություն էր տալիս հայերին:

Գրքի հեղինակը անդրադարձել և ըստ ամենայնի բացահայտել է ժամանակի պարբերական մամուլի կատարած դերը ռուսական հասարակությանը հայ ժողովրդի ներկային ու անցյալին ծանոթացնելու գործում:

Հայկական գաղութների առկայությունը և հայ զանգվածների շփումները շրջակա ռուս բնակչության հետ էական նշանակություն էին ունենում Երկու ժողովուրդների հոգևոր կապերի ու բարեկամության հարցում: Վերոհիշյալ գրականությանը, ինչպես նշում է հեղինակը, ծանոթ էին հայ հասարակության մտավորական շերտերը: Ռուսաստանի հայ բնակչության շատ ներկայացուցիչներ ճանաչված էին ռուսական արքունիքում, առևտրաարդյունաբերական շրջաններում, բանակում, և հետաքրքրվում ու ընթերցում էին ռուս-հայկական հարաբերություններին վերաբերող գրականությունը:

Գրքում վկայություններ է բերվում այն մասին, որ հայերը ոչ միայն ծանոթ էին ռուս պատմական գրականությանը, այլև ռուսական գրականությանը որոշ գործեր (Կիևի հիմնադրման առասպելը, Բորիսի և Գլեբի մասին երկը) թափանցում էին բուն Հայաստան: Հայ ընթերցող շրջանները ծանոթ էին Կարամզինի աշխատություն-

ներին: ՃՄՄՂ դարի ռուսական ամսագրի բաժանորդների ցուցակում նշվում էր նաև հայ վաճառական ու մտավորական Գրիգոր Կամպանովի անունը, իսկ Գուլիկովի աշխատության բաժանորդների թվում էին շափանեսու Լազարյանը և Ավետ Գալուստովը:

Համբերատար ու մանրախույզ ուղադրությամբ հաղթահարելով իր առջև ծառացած դժվարությունները, հեղինակը վիթխարի փաստական նյութ է բարձրացրել և առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել բազում նոր աղբյուրներում հայտնաբերել է Մովսես Խորենացու աշխատության լատիներեն թարգմանությունը, օգտագործել Ա. Լիզլովի «Սկյութական պատմություն», Մ. Չուլկովի «Ռուսական առևտրի սլատմություն» աշխատությունները, որոնք դուրս էին մնացել մասնագետների տեսադաշտից:

Քննարկվող աշխատությունը ամբողջական պատկերացում է տալիս հայերի ու Հայաստանի նկատմամբ ռուսական պատմագիտական մտքի գրսեռած վերաբերմունքի, ինչպես նաև ռուս և հայ ժողովուրդների մերձեցման հարցում նրա ունեցած կարևոր դերի մասին:

Աշխատության թերևս ամենակարևոր արժանիքն է այն, որ հեղինակին հաջողվել է վերաբերանալ նյութի փաստագրական նկարագրությունից և հենց առկա փաստերի հիման վրա կատարել գիտական լայնախոհ ընդհանրացումներ:

Բազմանշանակ հարցերի նվիրված և ընդգրկուն նման ուսումնասիրությունը գերծ չի կարող լինել նաև թերություններից: Այսպես, օրինակ, հեղինակը գրում է, որ Գյուլիստանի պայմանագրով սկսվեց հայկական հողերի միացումը Ռուսաստանին (էջ 91): Ինչպես հայտնի է, Լոռու և հարակից որոշ շրջանների միացումը կատարվեց 1813 թ. առաջ, դարասկզբին, Վրաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու հետ մեկտեղ: Նույն էջում նշվում է, որ ՃՄՄՂ դարում— ՃՄՂ դարի սկզբին Ռուսաստանի կենտրոնական, քաղաքներում հիմնվում են հայկական միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններ: Միջնակարգ՝ այո, սակայն բարձրագույն հաստատություն երբեք չի հիմնվել: Կարծում ենք ճիշտ չէ, երբ Գաբրիել Ալվազովսկին բնութագրվում է որպես հայ նշանավոր պատմաբան (էջ 349):

Նշված թերությունները մասնակի բնույթ են կրում և որևէ էական նշանակություն չեն կարող ունենալ սովետահայ պատմագրությունը հարստացնող սույն արժեքավոր աշխատության համար:

ՀՄՄՀ ԳԱ քրքրաչից անդամ

Վ. ԲԱՆՈՒԿԱՆՍԿԻ